«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ Թիվ 155 մ/մանկապարտեզ

Դաստիարակ՝ Լուսինե Քարտաշյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն ---------- **3**

1. Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև , նրա նշանակությունը -------- **4**

2. Էքսկուրսիաների անցկացման մեթոդիկան մանկապարտեզում ---------- **5**

3. Էքսկուրսիայի նախապատրաստումը և անցկացումը ----------**7**

4. Իմ փորձից ---------- **10**

5. Եզրակացություն ---------- **16**

Օգտագործած գրականության ցանկ ---------- **17**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էքսկուրսիա բառը լատիներեն նշանակում է կոլիկտիվ ուղևորություն: Էքսկուրսիան այցելություն է դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, գրադարաններ՝ բնապահպանական, ուսումնական,կրթամշակութային նպատակներով: Էքակուրսիան արտամանկապարտեզային դաստիարակության ճյուղերից մեկն է , որի նպատակը երեխաների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով ՝նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է: Այն նպատակաուղղված է նրանց հոգևոր , գեղագիտական , ֆիզիկական զարգացմանը: Այն դաստիարակին թույլ է տալիս կոնկրետ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը: Այն ինչը երեխան տեսնում է ,տպավորվում է նրա գիտակցության մեջ: Էքակուրսիան կարող է վարել և՛ մանկավարժը , և՛ էքսկուրսավարը , որոնց մեկնաբանության շնորհիվ երեխան սովորում է ճիշտ ընկալել իր տեսածը , ցուցադրածը , զգացածն ու շոշափածը: Էքսկուրսիաները շատ կարևորեն այն առումով , որ երեխան կարևորում է իր տեսածը , դառնում է նրա կրողը և փոխանցողը: Այս ամենը նպաստում է երեխաների աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը , նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը , սեր ու հոգատարություն արթնացնում դեպի բնությունը , հոգատար ու հարգալից վերաբերմունք են դաստիարակում մեր հայրենիքի,ազգային արժեքների և ավանդույթների նկատմամբ:

1.Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև , նրա նշանակությունը

Էքսկուրսիաները ընդլայնում են երեխաների մտահորիզոնը , նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով , անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ , որոնք մանկապարտեզում ցուցադրելը հնարավոր չէ , հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը , կենդանիները , մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ: Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար: Մեծ մանկավարժ ՈՒՇինսկին գտնում էր , որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի , իսկ միտքը զարգանում է , եթե մտքի , առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: ՈՒ մի ձևով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել , որքան էքսկուրսիայի միջոցով , որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության , իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ , դառնում է կոնկրետ ու որոշակի:

Էքսկուրսիաները կատարում են նույն գործառույթը , ինչ-որ պարապմունքները: Նրանք լինում են `

ՈՒսուցանող

- գիտելիքների խորացում , առանձին առարկաների և երևույթների մասին պատկերացումների կազմում
- գործնականում տեսական գիտելիքների կիրառում

Զարգացնող

- դիտումներ կատարելու կարողությունների զարգացում
- ուշադրության , հիշողության զարգացում

Դաստիարակչական

- գեղագիտական դաստիարակություն
- հայրենասիրության , բնության հանդեպ սիրո դաստիարակում

Էքսկուրսիաները և մշակութային այցերը ունեն ճանաչողական մեծ նշանակություն: Երեխաները խորությամբ ճանաչում են իրենց հայրենիքը , ծննդավայրը , ավանդույթները , կենցաղը , հերոսներին , գրողներին և երաժիշտներին , նպաստում են

քրիստոնեական արժեհամակարգի ամրապնդմանը: Դրանք ընդլայնում են աշխարհաճանաչողությունը , զարգացնում հետաքրքրասիրություն և նախաձեռնողականություն , դաստիարակում սեր դեպի մարդը , ընկերը , նպաստում միջանձնային շփումներին: Երեխան դառնում է ավելի համարձակ , բանիմաց , ինքնավստահ:

2.Էքսկուրսիաների անցկացման մեթոդիկան մանկապարտեզում

Կարևորագույն մեթոդը , որն ընկած է էքսկուրսիայի հիմքում՝ ճանաչողական , զննական մեթոդն է: Էքսկուրսիան կիրառվում է որպես ուսուցման մի մեթոդ , որից առաջ կամ հետո կարող են կիրառվել այլ մեթոդներ: Էքսկուրսիայի՝ որպես մեթոդի հիմնական ֆունկցիա, ուսումնասիրվող նյութը կամ օբյեկտը բնական վիճակում ընկալելն է: Ինչպես ասել է Վիգոտսկին . << Մեթոդի ընտրությունը դարձել է մարդու հոգեբանական գործունեության բացատրության ամենակարևոր խնդիրներից մեկը: Այս պարագայում մեթոդը միաժամանակ նախադրյալ է , նյութ , գործիք և ուսումնառության արդյունք >> : Էքսկուրսիաները իրենց ծրագրային օրակարգով լինում են տարբեր: Դա պայմանավորված է նրանով , թե ինչ տարիքային խումբ է գնում էքսկուրսիա: Յուրաքանչյուր տարիքային խմբում այն ձևավորվում է յուրովի՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից: Մանկապարտեզում էքսկուրսիաներ կազմակերպվում են բոլոր տարիքային խմբերում: Կրտսեր խմբերում այն իրականացվում է զբոսանքների և դիտումների միջոցով՝ մանկապարտեզում կամ մոտակա այգիներում: Այս տարիքում հիմնականում ուսումնասիրում են շրջակա միջավայրը: Միջին և ավագ խմբերում այդ օղակը մեծանում է: Այցելում են գրադարան , թանգարան , տպարան և այլն:

Այս խմբերում ***կոլեկտիվ*** հասկացությունը դրսևորելուց հետո հաջորդ քայլը էքսկուրսիա գնալն է : Այս տարիքային խմբին նպատակահարմար է տանել նաև տիկնիկային թատրոն՝ նախապես ծանոթացնելով ներկայացման թեմային , էթիկայի կանոններին , անձի դրսևորման գործոններին: Նշված խմբերում հիմնականում կիրառվում են ընթացիկ էքսկուրսիաներ՝ երբ թեման ուսումնասիրելուն զուգահեռ կամ ավարտելուց հետո կազմակերպվում է էքսկուրսիա: Օր.՝ << Գրքերի աշխարհ >> թեման ուսումնասիրելուց հետո այցելել Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան , իսկ փետրվար ամսին Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվա կապակցությամբ այցելել Հ. Թումանյանի անվան տուն – թանգարան: Տարվա ավարտին կազմակերպել զբոսանք Երևանում՝ տեսարժան վայրերի դիտում:

<< Ինձ շրջապատող աշխարհը >> ծրագրային բաղադրիչից երթևեկության կանոններն ուսումնասիրելուց հետո կազմակերպվում է էքսկուրսիա դեպի փողոց՝ օգտվելով վերգետնյա , ստորգետնյա անցումներից , լուսացույցից ու ճանապարհային նշաններից , որը էլ ավելի է խորացնում նրանց ստացած տեսական գիտելիքները:
Ճնշական ընկալումը հեշտացնում է երեխաների գիտելիքների յուրացման պրոցեսը , և քանի որ նրանց մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը , ուստի զարգացման վաղ էտապներում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով քան հասկացություններով: Հասկացությունները ու վերացական գաղափարները սանի գիտակցությանն ավելի հեշտ են հասնում , եթե դրանք ամրապնդվում են կոնկրետ փաստերով , օրինակներով ու պատկերներով: Դաստիարակը հնարավորություն է ունենում կոնկրետ ու վառ փաստերի հիման վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած պատճառահետևանքային կապերը և մարդու հզոր ուժը:

3.Էքսկուրսիայի նախապատրաստումը և անցկացումը

Առհասարակ ընդունված է , որ պարապմունքին լավ նախապատրաստվելը այն լավ անցկացնելու նախապայման է : Սա վերաբերվում է նաև էքսկուրսիաներին , զբոսանքներին և դիտումներին: Էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձնել նրա 3 հիմնական փուլերին.

- ***Նախապատրաստում***
- ***Անցկացում***
- ***Ամփոփում***

Ցանկացած էքսկուրսիա կազմակերպելուց առաջ ճիշտ կլինի , որ դաստիարակը կամ մանկավարժը ընտրի էքսկուրսիայի տիպը՝ համապատասխան ուսուցանվող նյութին , որովհետև դա նպաստում է նրա լավ նախապատրաստմանն ու անցկացմանը: Նախ դաստիարակը պետք է ուսումնասիրի տեղանքը , պայմանները և ինչ է անհրաժեշտ մասնակիցներին էքսկուրսիաբի ընթացքում: Նպատակահարմար է այն անցկացնել ոչ աշխատանքային օր , որպեսզի չխաթարվի մանկապարտեզի առօրյան: Ելնելով երեխաների անվտանգությունից էքսկուրսիաների վայրը պետք է ընտրվի այնպես , որ չլինի խոցելի վաըրերի մոտ գտնվող տարածք / լիճ , գետ , ձոր և այլն /: Էքսկուրսիայի մեկնարկից առնվազն 10 օր առաջ պետք է տեղեկացվի մանկապարտեզի տնօրենին , նրան տրամադրվի էքսկուրսիայի նպատակի , ամսաթվի , անցկացման վայրի , մասնակիցների թվի , պատասխանատու անձանց , փոխադրամիջոցի մասին հստակ տեղեկատվություն: Տնօրենը ուսումնասիրում է ներկաըացվաց տեղեկատվությունը , որոշում կայացնում էքսկուրսիան անցկացնելու կամ մերժելու մասին: Էքսկուրսիայի կազմակերպիչը պարտավոր է երեխաների օրինական ներկայացուցիչներին և մասնակցող այլ անձանց տրամադրել ամբողջական տեղեկատվություն էքսկուրսիայի մասին: Մանկապարտեզում իրականացվող էքսկուրսիաները , որոնք կազմակերպվում են մանկապարտեզից դուրս , իրականացվում են ծնողների մասնակցությամբ , իսկ ծնողի բացակաըության դեպքում՝ նրա գրավոր համաձայնությամբ: Շրջայցի ղեկավարը / դաս-տիարակը / պետք է ունենա ամբողջական տեղեկատվություն մասնակիցների , երեխաների և նրանց ծնողների մասին , այդ թվում՝ տեղեկություն մասնակից երեխաների հատուկ կարիքների մասին :

Էքսկուրսիան սկսվում է նրանով , որ դաստիարակը հավաքում է բոլոր երեխաներին , հիշեցնում է էքսկուրսիայի կամ զբոսանքի նպատակը , տալիս է առաջադրանքներ , բացատրում երեխաների անելիքներն ու պարտաականությունները: Նաև հիշեցնում է անվտանգության կանոնների մասին՝ փոխադրամիջոցում և նրանից դուրս: Էքսկուրսիաները բացառիկ կարևոր դեր ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանց երեխայի մեջ զարգացնում են ուշադրութկուն , դիտողունակություն , ինքնուրույնություն , մշակում են կարգապահություն և կազմակերպվածություն՝ մանկապարտեզից դուրս իրենց պահելու դաստիարակի հրահանգները ճիշտ և ժամանակին կատարելու ունակություն: Այս ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն , փոխօգնություն , համերաշխություն , կոլեկտիվիզմ: Էքսկուրսիաների ժամանակ բացահայտվում է նաև երեխաների բնավորության դրական և բացասական կողմեր , ի հայտ են գալիս մի շարք ընդունակություններ: Էքսկուրսիայից ստացած տպավորությունները անմիջական են և պահպանվում են շատ երկար , և զուր չէ որ ասում են. << Լավ է մեկ անգամ տեսել , քան հազար անգամ լսել >> : Երբեք չի կարելի էքսկուրսիայի անցկացմանը երկրորդական նշանակություն տալ , համարել լրացուցիչ կամ ավելորդ աշխատանք:

Նախադպրոցական տարիքում շատ կարևոր են զբոսանքներն ու դիտումները , որոնց ընթացքում էլ հենց ձևավորվում են իմացական գիտելիքները: Երեխաները անմիջականորեն առնչվում են բնութէյանը , ձեռք բերում որոշակի գիտելիքներ: Էկոլոգիայի պարապմունքների մեծ մասը նպատակահարմար է անցկացնել զբոսանքների և էքսկուրսիաների միջոցով: Նախապես երեխաները ունենում են որոշակի տեսական գիտելիքներ , իսկ դիտումների շնորհիվ այն ամրապնդվում է: Ամենօրյա զբոսանքների համար կարելի է ընտրել մոտակա այգին , պուրակը: Այն տարածքը , որտեղ պետք է այցելել , կրկին պետք է նախապես ուսումնասիրվի դաստիարակի կողմից: Կրտսեր տարիքի երեխաների հետ անցկացվող դիտումները լինում են կարճատև և առարկայական , իսկ ավագ խմբերում ավելի երկար են: Էքսկուրսիաները , զբոսանքները , այցերը և դիտումները զուգակցվում են համապա-տասխան զրույցներով , որի ընթացքում երեխաները մտնում են ակտիվ երկխոսության մեջ և ստանում որոշակի գիտելիքներ:

Մանկապարտեզում բնապահպանակն թեմաներով էքսկուրսիաներին զբոսանքներին և դիտումներին երեխաները մասնակցում են մեծ ակտիվությամբ:

Պատճառը մեկն է՝ բնությունն անսպառ է և տալիս է անսահման , բազմազան , վառ ու շատ հետաքրքիր զգացողություններ , առաջացնում է ջերմ հետաքրքրություն աշխարհի և կյանքի նկատմամբ : Երեխան շփվում է կենդանի էակների և բույսերի հետ , անկենդան բնության , ուսումնասիրում է նրանց մոտիկից , կատարում է հետևություններ , տեսնում արդյունքը: Ցանկացած էքսկուրսիայի ժամանակ , անկախ նրանից թե ուր են գնում , երեխաներին կարելի է ցույց տալ թե ինչ կա շուրջը , ինչպիսի ծառ է , միջատ , թռչուն, դիտել օրվա եղանակը , երկինքը , արևը , ուսումնասիրում այն , ինչ տեսնում են ճանապարհին:

Ինչպես հայ մեծ լուսավորիչ – մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել.՝ << Բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով , իր պես-պես գույներով ու ձայներով , դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերով , իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է մի ուսուցիչ , որ ամենից հեշտ ու դյուրին ձևով , խոր ու կայուն կերպով սովորեցնում է մարդկանց բնությունը ճանաչել: Ահա թե ինչու ուսուցման պրոցեսում լայնորեն պետք է օգտագործել էքսկուրսիաները , որպես ուսուցման միջոց , որպես շրջապատի բնությունն ու հասարակությունը ճանաչելու , շրջապատի մասին ռեալ գիտելիքներ հաղորդելու եղանակ >> :

4. Իմ փորձից

Մշակութային այցերի և էքսկուրսիաների շնորհիվ երեծաների գիտակցության մեջ ձևավոր -վում է հարգանք հայրենի բնության , մեր ազգի , մշակույթի , հերոսների , ավանդույթների , գիր ու գրականության , արվեստի ու երաժշտության հանդեպ:
Քանի որ աշխատում եմ ավագ տարիքային խմբի երեխաների հետ , տարվա ընթացքում կազմակերպում եմ մի շարք էքսկուրսիաներ:
Կարևորում եմ ծնողների ներկայությունը , ինչն ազդում է երեխաների վարքագծի դրսևորմանը: *Էքսկուրսիա բնապահպանության թանգարան* — երեխաներին շատ է գրավում այս թանգարանը : Այնտեղ տեսնում են բազմազան կենդանիներ , թռչուններ , միջատներ , ձկներ , ձեռք են բերում բազմաթիվ գիտելիքներ դրանց մասին: Էքսկուրսիայի ընթացքում երեխաները շատ հարցերի պատասաններ ստանում են հենց տեղում՝ իմ և էքսկուրսավարի կողմից: Երեխաները ծանոթացան նաև <<Կարմիր գրքին>> , իմացան նրա նշանակությունը , հենց թանգարանում տեսան այն կենդանիներին ու բույսերին , որոնք ընդգրկված են <<Կարմիր գրքում>> : Այդ օրը նրանք էլ ավելի կարևորեցին կենդանիների ու բույսերի դերը մարդու կյանքում , հասկացան և խոստացան , որ հոգ կտանենբնության մասին և կպաշտպանեն կենդանիներին:

Այցելում ենք Հաղթանակի զբոսայգի , զբոսնում բնության գրկում , կատարում ենք դիտում- ներ: Դիտակետից դիտում ենք նաև մայրաքաղաք Երևանը, ծաղիկներ դնում անմար կրակի մոտ , երեխաները մոտիկից ծանոթանում են Հայաստանի խորհրդանիշներից Մայր Հայաս -տանի հուշարձանին , կարճատև բացատրական զրույցի շնորհիվ իմանում են նրա ստեղծման պատմությունը , որից հետո այցելում ենք նաև <<Մայր Հայաստանի ռազմական պատմութ -յան թանգարան >>: Այստեղ երեխաները ամրապնդում են գիտելիքները Հայաստանի խորհրդ- դանիշների մասին , տեսնում և շոշափում են դրոշը , հսկայական զինանշանը , ծանոթանում որոշ զինատեսակների: Երեխաները շատ ոգևորվում են , երբ այնտեղ տեսնում են իրենց իսկ ծանոթ ազգային հերոսներին ՝ Վազգեն Սարգսյանին , Թաթուլ Կրպեյանին , Մոնթե Մելքոն -յանին , Գարեգին Նժդեհին , Դրոյին , Ջորավար Անդրանիկին և այլոց : Հատկապես մեծ ոգևոր- ություն է զգացվում տղաների մոտ , նրանց շատ գրավում են զինատեսակ- ները , ինչը ունի նաև գենետիկ նշանակություն: Այս էքսկուրսիայից հետո երեխաները տևական ժամանակ լինում են տպավորությունների տակ , ծնողների խոսքով նրանց ստիպում են գնել խաղալիք զենքեր , բակում և մանկապարտեզում անընդհատ խաղում են մարտական խաղեր: Քանի որ զբոսայգին ընդարձակ է և կանաչապատ , երեխաները մաքուր օդ են շնչում , շփվում կենդանի բնության հետ , նշում իրենց ծանոթ ծառատեսակները և բույսերը , խաղում համախմբված խաղեր:

Ավանդույթ է դարձել ամենամյա այցելությունները Հովհաննես Թումանյանի տուն-թան - գարան և Խնկո Ապոր մանկական ազգային գրադարան: Հ. Թումանյանի տուն-թանգարան այցելում ենք տեսական գիտելիքների մեծ պաշարով մեծն գրողի կյանքի և գործունեության մասին: Այնտեղ նրանք տեսնում են թե ինչպես է ապրել Թումանյանը , ինչ կենցաղ է վարել , ծանոթանում են նրա գրադարանին , լսում են հետա -քրքրքիր դրվագներ նրա կյանքից: Նաև ծանոթանում են նրա ստեղծած խաղերին , որոնցից՝ << Դդում >> զվարճալի խաղը մեծ հաճույքով խաղում ենք նաև խմբում: Երեխաներին միշտ շատ է գրավում Թումանյանի պատշգամբը իր ճոճաթոռով , որին նստած նա ստեղծել է իրանց այդքան սիրելի հեքիաթները և բանաստեղծությունները: Գրքի հանդեպ սերը մեծացնելու նպատակով այցելում ենք Խնկո Ապոր մանկական ազգային գրադարան: Երեխաները դիտում են նկարազարդ գրքեր , տեսնում են տարբեր չափերի , խոսող , երաժշտական , թատերական գրքեր: Էքսկուրսավար-խաղավարի հետ խաղում են ուշադրությունը զարգացնող խաղեր , գուշակում հանելուկներ , դիտում մուլտֆիլմ: Եվ վերջում գալիս է երեխաների ամենասիրելի պահը , նրանք հայտնվում են հեքիթի սենյակում , որտեղ հեքիաթասաց մորաքույրը , որը երեխաներին ներկայացնում է մյուզիքլ-հեքիաթ:

Պարտադիր կազմակերպում եմ էքսկուրսիա << Շրջայց Երևանի սրտում >> թեմայով: Երեխաները շրջում են Ազատության հրապարակում , հեռվից դիտում են Կարապի լիճը , պտտվում ենք Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի շուրջը , զգում են նրա մեծությունն ու ճարտարապետական գեղեցկությունը , դիտում շրջակայքի արձանները , որոնցից են ՝ Ալ. Սպենդիարյան , Հ. Թումանյան , Արամ Խաչատրյան , Կոմիտաս , Առնո Բաբաջանյան , Մարտիրոս Սարյան:

Ինձ համար տարվա բացահայտում էր << Մամիկի հյուրատունը >> : Երեխաները , ինչպես նաև մենք՝ մեծերս , տպավորված էինք ինքնատիպ հայկական կոլորիտով՝ այդ գողտրիկ վայրից:

Նախ երեխաներին դիմավորեցին փակ դռների մոտ , որը բացվեց միայն հանելուկներ գուշակելուց հետո , երեխաները ծանոթացան , թե ինչպես են հայերը ապրել հնում , ինչ կենցաղ են վարել , ինչպիսի սպասք , հանդերձանք և կահավորանք են ունեցել:

Տատիկի սենյակում լսեցին , ՝ << Տատիկի հեքիաթը >> , ապա երկնքից ընկան խնձորներ , երեխաները համտեսեցին , և հետո հեքիաթից ստացած տպավորությունները փոխանցեցին թղթին՝ նկարելու միջոցով:

Բակում Տատիկի հետ խաղացին ազգային խաղեր , սովորեցին փոքրիկ զվարճալի խաղիկ-ներ , լսեցին ազգային ավանդական երգեր:

Իսկ ամենատպավորիչը հաց թխելու արարողությունն էր: Վառվեց ավանդական հայկական թոնիրը , երեխաները իրենց ձեռքով՝ մեծերի օգնությամբ , գրտնակեցին լավաշի խմորը , այնուհետև այն ուղարկեցին տաք թոնրի մեջ թխվելու , իսկ վերջում՝ հյուրատանը ընկերներով միասին հավաքվեցին , սեղան նստեցին և ճաշակեցինիրենց աշխատանքի արդյունքը:

Երեխաները այնքան էին տպավորվել , որ չէին ցանկանում տուն վերադառնալ , և ես կարծում եմ , որ այսպիսի էքսկուրսիաները մեծ հետք են թողնում երեխաների գիտակցության մեջ:

Վերադարձի ճանապարհին զրույցի միջոցով ամփափեցի էքսկուրսիան՝ արդյունավետությունը պարզելու համար: Արդյունքը գոհացնող էր;Երեխաները շատ տպավորված էին , նույնիսկ դրանից երկու շաբաթ անց դեռ վերհիշում էին պահեր իրենց այդ օրվանից;Սա արդեն խոսում է այն մասին , որ էքսկուրսիան մեծ դեր ունի երեխաների կրթության և դաստիարակության գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշվածից ելնելով գալիս եմ այն եզրահանգման, որ էքսկուրսիաները ,մշակույթային այցերը ,զբոսանքներն ու դիտումները զարգացնում են երեխաների տեսողական հիշողությունը, և այն ինչ որ երեխան տեսնում է այս տարիքում տպավորվում է նրա գիտակցության մեջ:

Էքսկուրսիաների կազմակերպման ժամանակ մեծ է դաստիարակի դերը: Մեր նպատակն էր,երեխաների համար ստեղծել ժամանցի մի տարբերակ ,որը կնպաստի երեխաների աշխարհաճանաչմանն ու աշխարհընկալման զարգացմանը: Երեխաներին տրվում է ինքնադրսևորման,ինքնաբացահայտման և ինքնագնահատման հնարավորություն: Ներկայումս երեխաների մեծամասնությունը գամված են հեռուստացույցներին և համակարգիչներին,ունեն շփման և հաղորդակցման խնդիր,ուստի նման ինտելեկտուալ այցերի կազմակերպումը հնարավորություն է տալիս հաղորդակցվել,լավ ժամանակ անցկացնել և լրացուցից ինֆորմացիա ստանալ ուսուցանվող նյութի վերաբերյալ: ՈՒղղորդվում եմ Հովարդ Գարդներիմտածողության տեսակետով.<<Վարպետ է այն ուսուցիչը,ով կարողանում է բացել մի շարք տարբեր պատուհաններ միևնույն նյութի կամ հասկացության շուրջ>>:

Էքսկուրսիաները ոչ միայն համախմբում են երեխաներին,այլ նաև ծնողներին: Կառուցվում է ամուր ծնողական կոլեկտիվ , ինչը դրական ազդեցություն է ունենում ծնող-երեխա-դաստիարակ առողջ փոխհարաբերությունների ձևավորման գործում:

Իմ կողմից կազմակերպված էքսկուրսիաները եղել են հետաքրքիր,բազմաբովանդակ,ուսու-ցանող և տպավորիչ: Ես հուսով եմ ,որ նրանց մեջ կարողացել եմ սերմանել սերմանել սեր դեպի մարդը,բնությունը, հայրենիքը, հավատքը, մշակույթը:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հ.Միտոյան և ուրիշ.; Մանկապարտեզի միջին խմբի /4-5 տարեկանների / կրթական համալիր ծրագիր , Երևան 2011

2.Նախաշավղ գիտամեթոդական հանդես , Երևան 2010

3. Հ.Միտոյան , Մ.Սարգսյան , Նախադպրոցական կադրերի վերապատրաստման փաթեթ , մեթոդական նյութեր , Երևան 2003

4. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես , Երևան 2014

5. Խ.Աբովյան << Երկերի լիակատար ժողովածու >> , Երևան 1947

6. Ց.Ամիրջանյան , Ա.Սահակյան , Մանկավարժություն , Երևան 2005

7. Հովարդ Գարդներ << Գիտակցության կառուցվածքը >> , 1983թ.

8. Պ.Պ.Բլոնսկի <<Մանկավարժական գործունեությունը և տեսությունը >>